

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման նոր բանաձևի վերաբերյալ

1. Նախագծում ավելի հստակեցնել, այն մոտեցումը, որ եթե 2020թ. հունվարի 1-ի դրությամբ հաստատված աշխատավարձերը ավելի բարձր են քան բանաձևով նախատեսված աշխատավարձերը, ապա դպրոցի բյուջեն հաշվելու ժամանակ առաջնորդվել առկա բարձր աշխատավարձերով(ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ, նախակրթարան, վարչական անձնակազմ):
2. Քանի որ մարզային ենթակայության դպրոցների մեծ մասը հիմնական են, և նույն թվով դասարաններ ունեցող դպրոցներում աշակերտների թիվը խիստ տարբեր է /քաղաքային համայնքներում 12 դասարան ունեցող դպրոցների դեպքում այն կարող է ավել լինել 300 աշակերտից, քանի որ դասարաններում աշակերտների խտությունը մեծ է, իսկ գյուղական համայնքներում 12 դասարանի դեպքում այն 100-ից քիչ ավել կամ պակաս լինի՝ աշակերտների սակավության պատճառով/, հետևաբար տնօրենի և ուսուցչական համակազմի գործառույթների ծավալները ևս տարբեր են, առաջարկում ենք դասարանների թիվը համապատասխանաբար սահմանել 1-9-ը, 9-18 և 18-27՝ նախագծով նախատեսված 1-12, 12-24 և 24-36-ի փոխարեն:
3. Դասարանի ղեկավարի և առարկայական մեթոդական միավորումների նախագահների դեպքում անհրաժեշտ է ըստ նախագծի նախատեսված լրացուցիչ վարձատրության չափերը փոփոխել՝ ԴԴԼ՝ 20%, ՄՄԳ՝ 10%, քանի որ դասղեկները ԴՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության համաձայն ունեն ավելի մեծ պատասխանվությունը, ավելի շատ աշխատանք են կատարում ուսումնական գործընթացի մասնակիցների հետ, քան առարկայական մեթոդական միավորումների նախագահները: Բարձր պատասխանատվության և ցածր վճարվելու դեպքում մանկավարժները կիրառարվեն ստանձնել դասղեկի պարտականություններ:
4. Փոխտնօրեն ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով Հաստիքի նվազագույն դրույքաչափը սահմանել 1 դրույք, որովհետև 0.5 դրույքով աշխատող ուսումնական մասը ղեկավարող աշխատանքների պատշաճ կատարումը վերահսկող պաշտոնյայի կես օր աշխատանքը չի կարող արդյունավետ լինել դպրոցի համար, քանի որ միայն դասապրոցեսը տևում է մինչև 15:00
5. 2017թվականից ՀՀ Լոռու մարզում իրականացվում է համընդհանուր ներառական կրթություն: Մարզում 2020թ. հունվարի 1-ի դրությամբ ներառական կրթություն են ստանում վկայագրված /միջին, խորը և ծանր/ թվով 636 աշակերտ: Մասնագիտացված կրթության աջակցությունների գծով փոխտնօրենի մանկավարժական պաշտոնի նկարագրի 12-րդ կետը սահմանում է, որ մասնագիտացված կրթության աջակցությունների գծով փոխտնօրենները մասնակցում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը: Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք մասնագիտացված կրթության աջակցությունների գծով փոխտնօրենի հաստիք սահմանել նաև հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար */առաջարկում ենք հանել հատուկ և մասնագիտացված նշումով սահմանափակումը/* համընդհանուր ներառական կրթության իրականացման և ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրով սահմանված գործառույթների արդյունավետությունը ապահովելու նպատակով: ՀՀ Լոռու մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների գերակշիռ մեծամասնությունում առկա է մասնագիտացված կրթության աջակցությունների գծով փոխտնօրենի հաստիք, հետևաբար հաստիքի կրճատումը կունենա նաև սոցիալական բացասական հետևանքներ:

6. Համընդհանուր ներառական կրթություն իրականացնող մարզային ենթակայության դպրոցներում այս պահին առկա են հոգեբանի, սոցիալական մանկավարժի հաստիքները, որոնց վերաբերյալ նախագծում որևէ պարզաբանում չկա:

7. Տնտեսվար՝ շատ դեպքերում փոքր դպրոցներում տնտեսվարը ոչ միայն կատարում է իր աշխատանքը, նա նաև կատարում է բանվորի, պահեստապետի, վարպետի աշխատանքը, այլ կերպ ասած ունիվերսալ աշխատակից է: Փոքր դպրոցներում տնտեսվարի բացակայության դեպքում կառաջանան որոշակի խնդիրներ:

8. Կազմակերպիչ՝ միջոցառումների գծով, նախատեսված է *մասնագիտացված դպրոցներում, սակայն* կրթադաստիարակաչական միջոցառումներն անհրաժեշտ են ոչ միայն մասնագիտացված դպրոցներում, հետևաբար առաջարկում ենք հանել մասնագիտացված նշումով սահմանափակումը, ինչպես նաև հստակեցնել որոշման կետը:

9. Համակարգչային օպերատոր՝ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԿՏԱԿ) կողմից վարվող «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ»-ի հետ կապված մեծ ծավալի աշխատանքը հիմնականում կատարում է համակարգչային օպերատորը, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ծավալը առաջարկում ենք վերանայել համակարգչային օպերատորի դրույքաչափը և վարձատրության չափը:

10. Գլխավոր հաշվապահներ նախատեսված է մինչև 12 դասարանի համար 0.5 դրույք, առաջարկվում է 12-ը փոխել 9-ով:

11. 0.5 դրույք գործավար և գրադարանավար նախատեսված է մինչև 12 դասարան ունեցող դպրոցներում, սակայն նախագծում այն հստակ չի նշված, ենթակա է խմբագրման:

12. Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետ նախատեսված է 12 և ավել դասարանների համար, առաջարկվում է 12-ը փոխել 9-ով:

13. Դեռևս կան դպրոցներ, որոնք ջեռուցվում են գազի վառարաններով, վառելափայտով, էլեկտրական ջեռուցիչներով, նախագծով նրանց վերաբերյալ հաշվարկ չի ներկայացվել, առաջարկվում է նախատեսել 0.5 դրույք հաստիք:
14. Հաշվարկներում բացակայում է հատուկ մանկավարժների համար նախատեսվող ծախսերը, այն անհրաժեշտ է մտցնել բանաձևի հաշվարկում:
15. Որոշմամբ սահմանել, որ բանաձևով հաշվարկելու դեպքում ֆինանսական միջոցների առկայության դեպքում դպրոցներին թույլատրել մարզպետարանի համաձայնությամբ ելնելով դպրոցի առանձնահատկություններից ըստ անհրաժեշտության հաստիքացուցակներում կատարել փոփոխություններ, որը կարող է նպաստել աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:
16. Քանի որ բանաձևը նոր է և առկա թերությունները կարող են բացահայտվել այն ուժի մեջ մտնելուց հետո, ինչպես նաև 2020թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած բանաձևով հաշվարկելու դեպքում դպրոցների մի մասը հայտնվել էին ֆինանսական վատ վիճակում և մարտ ամսին դպրոցների փակվելու հետ կապված վերաբաշխումներ նախատեսված է իրականացնել նոր ուսումնական տարին սկսելուց հետո(սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին), առաջարկում ենք 2020 թվականին թույլատրել մարզպետին 2020 թվականի բյուջեով մարզին հատկացված գումարների շրջանակներում կատարել վերաբաշխումներ՝ համաձայնեցնելով նախարարության հետ: